Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

~~**Հոդված 6. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ղեկավարումը**~~

~~Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումները գործում են քաղաքացիական պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) կազմում:~~

~~Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ղեկավարումն իրականացնում է լիազորված մարմնի ղեկավարը:~~

Հոդված 6. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ղեկավարումը

1. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումները գործում են Փրկարար ծառայության կազմում:

2. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ղեկավարումն իրականացնում է Փրկարար ծառայության տնօրենը:

Հոդված 7. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների կառուցվածքը և թվակազմը

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների կառուցվածքը և թվակազմը հաստատում է Լիազոր ~~լիազորված~~ մարմնի ղեկավարը:

Հոդված 8. Պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և պաշտոնատար անձանց պարտականությունները քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներին աջակցելու գործում

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպություններն ու պաշտոնատար անձինք իրենց լիազորությունների սահմաններում աջակցում են քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներին՝ նրանց վրա դրված պարտականությունները կատարելու գործում:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների առջև դրված խնդիրների կատարման նպատակով հատուկ թռիչքային հանձնարարություններ կատարող, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում միջազգային հումանիտար օգնություն իրականացնող

օդանավերի վայրէջքը, կայանումը, լցավորումը, թռիչքի նախապատրաստումը և թռիչքն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինների պաշտոնատար անձինք, զինվորական պարետները, պետական կառավարման լիազորված մարմինների ավտոտեսչությունների աշխատակիցներն ապահովում են քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ծառայողների անարգել արտահերթ տեղափոխումը և երթևեկության անվտանգությունը:

Ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակների իրավական ռեժիմի պայմաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպություններն ու պաշտոնատար անձինք աջակցում են իրենց կապի միջոցների՝ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների կողմից առաջնահերթ օգտագործմանը:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների՝ իրենց վրա դրված պարտականությունների կատարման ժամանակ բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում են Լիազոր ~~լիազորված~~ մարմնի և այլ բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող հաստատությունները:

Հոդված 11. Զենք գործադրելը և կրելը

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողներն իրավունք ունեն անձամբ կամ ստորաբաժանման կազմում զենք գործադրելու՝

1) քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողների, Լիազոր ~~լիազորված~~ մարմնի այլ անձնակազմի վրա կատարվող հարձակումները հետ մղելիս, եթե իրական վտանգ է սպառնում նրանց կյանքին և առողջությանը.

2) իրենց զենքին տիրելու փորձերը կանխելիս.

3) մարդկանց կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող կատաղած կամ վայրի կենդանիներին վնասազերծելիս.

4) ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակների իրավական ռեժիմի պայմաններում համապատասխան լիազոր մարմինների սահմանած պահանջները վարորդի կողմից չկատարելու դեպքում տրանսպորտային միջոցը սահմանված կարգով կանգնեցնելիս.

5) առանց զգուշացման՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված խնդիրներն իրականացնելիս:

Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում զենք կիրառվում է, եթե «Կանգնի՛ր» արձագանքից և օդ կրակելուց հետո կարգազանցները չեն ենթարկվում:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողները պարտականությունները կատարելիս զենք գործադրելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներին արգելվում է զենք կիրառել հղիության ակնհայտ նշաններով կանանց, հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի):

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին մասնակցելու նպատակով զենքով և հատուկ տեխնիկայով հանդերձավորված

քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների կողմից զենք կրելը և գործադրելը կարգավորվում են միջազգային պայմանագրերով:

Հոդված 14. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մարտական կիրառումը քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին և փրկարարական աշխատանքներին մասնակցությունը

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մարտական կիրառման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, փրկարարական ծառայության կանոնագրքերով և կանոնադրություններով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների պահակային ծառայությունը կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պահակային ծառայությունը սահմանող իրավական ակտերին համապատասխան:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում պահակային ծառայությունը կարող է կազմակերպվել նաև ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների՝ փրկարարական ծառայության մեջ չգտնվող անձանց միջոցով: Ռազմականացված պահակային ստորաբաժանումներում պահպանությունն իրականացվում է ծառայողական զենքով՝ քաղաքացիական պաշտպանության բնագավառի Լիազոր ~~լիազորված~~ մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

Հոդված 15. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների անձնակազմը

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների անձնակազմը բաղկացած է փրկարարական ծառայողներից և քաղաքացիական անձնակազմից:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողներին շնորհվում են փրկարարական կոչումներ՝ «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական ծառայողները կրում են փրկարարական ծառայության համազգեստ, փրկարարական կոչումներ և քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների տարբերանշաններ, ինչպես նաև միջազգային տարբերանշաններ և կրում են մարտական ու ծառայողական զենք:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում փրկարարական ծառայությունն ու քաղաքացիական անձնակազմի գործունեությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների փրկարարական և քաղաքացիական ծառայողներին տրվում է անձն ու կարգավիճակը հաստատող վկայական:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների տարբերանշանների, ծառայողների անձն ու կարգավիճակը հաստատող վկայականների ձևերը հաստատում է Լիազորլիազորված մարմնի ղեկավարը:

Հոդված 16. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների համալրումը

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների համալրումը փրկարարական ծառայողներով, ռազմականացված կամ ոչ ռազմականացված պահակային ստորաբաժանումների քաղաքացիական անձնակազմով ու տեխնիկական սպասարկում իրականացնող անձանցով իրականացվում է «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում փրկարարական ծառայությունը կազմակերպվում է փրկարարական ծառայության կանոնագրքերով և կանոնադրություններով սահմանված կարգով:

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների համալրման վիճակի և որակի, ստորաբաժանումներում փրկարարական ծառայողների տեղաբաշխման, ծառայության կրման ու կազմակերպման պատասխանատվությունը կրում է Լիազոր լիազորված մարմնի ղեկավարը:

(պարբերությունը հանվել է 26.05.05 ՀՕ-124-Ն)

Հոդված 17. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների կադրերի պատրաստումը և ընտրությունը

(վերնագիրը փոփ. 26.05.05 ՀՕ-124-Ն)

Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների կադրերի պատրաստումը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումն իրականացվում են Լիազոր լիազորված մարմնի, ուսումնական հաստատություններում և ուսումնական այլ հաստատություններում՝ «Փրկարար ծառայության մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

(պարբերությունը հանվել է 26.05.05 ՀՕ-124-Ն)